ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 Նոյեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

162
(2828)

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՀՈԴ ԵՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Դատելով ԱԺ վերջին նիստից՝ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի պաշտոնավարմանը շատ քիչ ժամանակ է մնացել: ՔՊ-ական պատգամավոր, ՔՊ փոխնախագահ Վահագն Ալեքսանյանն ԱԺ հայտարարությունների ժամին հայտարարել է. «Մեզ տեղեկություններ են հասնում, որ քաղաքացիներից բժշկական հաստատություններում կանխիկ գումարներ են ուզում... Այդ գումար ուզող մարդն այն գողանում է: ՀՀ-ում բոլոր բժշկական ծառայությունները կատարվում են անկանխիկ եղանակով: Զարմացած եմ, որ այդ երեւույթն այսքան համատարած բնույթ է կրում: Սա եւ՛ առողջապահական համակարգի, եւ՛ իրավապահ մարմինների բացթողումն է»: Ինչպես հայտնի է, բուժկենտրոններում վճարումներն անկանխիկ եղանակով են. այդ մասին շատ է խոսվել: Կառավարության նիստերից մեկի ժամանակ էլ Նիկոլ Փաշինյանն ասաց, թե պետք է քիչ-քիչ անցում կատարել բացարձակ անկանխիկ եղանակի, որ անգամ տերմինալներով կանխիկ փողը չմուտքագրեն, այլ քարտով վճարեն: Ու հիմա Անահիտ Ավանեսյանի ղեկավարած կառույցի դեմ նման դեմարշ է սկսել ՔՊ-ի կարկառուն դեմքերից մեկը: Սա պատահական չէ, եւ նա նման հրապարակային քայլերի չէր գնա առանց Փաշինյանի հետ ճշտելու: Ասել է թե՝ այս ամենը արվում է՝ եւս մեկ անգամ կարծես ցույց տալու, որ մասնագիտությամբ իրավաբան Անահիտ Ավանեսյանը չի տիրապետում առողջապահության ոլորտին. Վահագն Ալեքսանյանն էլ ասաց, որ դա առողջապահական համակարգի, ասել է թե՝ իրենց նախարարի բացթողումն է: Ու հիմա ենթադրվում է, որ այսպես նախարարի պաշտոնանկության համար հող է նախապատրաստվում: Փաստորեն, Ավանեսյանին չի փրկի անգամ ՔՊ-ական դառնալն ու կուսակցական միջոցառումներին գերակտիվ մասնակցելը: Նա հրաժեշտ կտա պաշտոնին՝ չնայած ամեն գնով վարչապետի աչքին երեւալու, նաեւ սիրաշահելու փորձերին: Կարծես թե, սա արվում է՝ ապահովագրական համակարգի ներդրմանն ընդառաջ: Սա թերեւս այլ պատմություն է՝ իր բազմաթիվ խութերով ու նախապատմություններով:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ական պատգամավոր Արսեն Թորոսյանին հաջողվել է հարթել երբեմնի լարված հարաբերությունները թիմակիցների հետ: «Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար անդրադարձել էր, որ Արսեն Թորոսյանի պաշտոնավարման ժամանակ առողջապահության ոլորտում կորոնավիրուսի դեմ պայքարի մասով սկանդալային բացահայտումներից հետո ՔՊ-ականները, այդ թվում՝ Նիկոլ Փաշինյանը, լարվել էին Թորոսյանի հետ՝նրան դիտարկելով իբրեւ հիմնական մեղավոր: Թորոսյանն էլ իր հերթին էր երես թեքել իր թիմակիցներից, չէր շփվում նրանց հետ, կուսակցական հանդիպումներին չէր մասնակցում: Ավելին՝ մամուլի հրապարակումների համաձայն՝ Նիկոլ Փաշինյանը որոշել էր պատժել Թորոսյանին. քննարկումներ կային նաեւ, որ գլխավոր դատախազը, հնարավոր է, Թորոսյանին անձեռնմխելիությունից զրկելու հարցով գնա ԱԺ: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ հիմա ամեն ինչ այլեւս առաջվանը չէ. Թորոսյանը դարձի է եկել, վերականգնել է հարաբերությունները թիմակիցների հետ ու հիմա ամբողջ ոգով լծվել է կուսակցաշինությանը՝ վարչության նիստերին է մասնակցում, մարզեր է այցելում, կուսակցական ակտիվի հետ հանդիպումներ է ունենում: Մի խոսքով, կորչեն պետբյուջեից մսխված գումարները, կարեւորը ՔՊ-ն է:

Նոյեմբերի 13-ին խառնաշփոթ իրավիճակ է եղել Արմավիրի բանտում, որտեղ գիշերով սկսել են տակնուվրա անել 3-րդ մասնաշենքի խցերը: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ 3-րդ մասնաշենքից իրավապահները տարել են հայտնի քրեական հեղինակության: Դիմեցինք, իհարկե, Քրեակատարողական ծառայության լրատվական բաժին, որտեղին հայտնեցին. «Հիմնարկներում մշտապես ու պարբերաբար իրականացվում են չնախատեսված խուզարկություններ՝ արգելված իրեր եւ թաքստոցներ հայտնաբերելու ուղղությամբ, իսկ նոյեմբերի 13-ին մեծ խուզարկություն է իրականացվել «Արմավիր» ՔԿՀ-ում, հայտնաբերվել են բազմաթիվ արգելված իրեր եւ թմրամիջոցներ: Մեր պաշտոնական կայքէջում մենք մշտապես լուսաբանում ենք արգելված իրերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունքները: «Արմավիր» ՔԿՀ-ի դատապարտյալի տեղափոխությունն անմիջական հետեւանքն է նոյեմբերի 13-ին կատարված միջոցառումների, որոնց շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել դատապարտյալներից մեկին տեղափոխել այլ քրեակատարողական հիմնարկ»: Ըստ ամենայնի, ինչ-որ անթույլատրելի բաներ են հայտնաբերվել, որոնք դեռ գաղտնի են պահվում: Կիմանանք:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը պետական պաշտոնյաների շուրջ նոր գործընթաց է սկսել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ բարձր պաշտոններ զբաղեցրած անձանց հայտարարագրերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը անհամապատասխանություններ է հայտնաբերել եւ որոշել է «հետ գնալ», վերլուծել պաշտոնյաների՝ տարբեր տարիների ընթացքում ներկայացված հայտարարագրերը: Հիշեցնենք, որ 2022 թվականի նոյեմբերի 23-ին գրել էինք, որ ՀՀ պետական պաշտոնյաները ծանուցումներ են ստացել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից: Ծանուցման մեջ հանձնաժողովը կոնկրետ հարցադրումներ էր արել պետական պաշտոնյաներին եւ պահանջել հայտնել, թե այս կամ այն բիզնեսի, գույքի կառավարման հետ ինչ առնչություն ունեն: Ավելին՝ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը դիմում էր ներկայացրել ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, որպեսզի օպերատիվ հետախուզական խումբը ստուգի բոլոր պետական պաշտոնյաների գույքը եւ պարզի, օրինակ, նրանք ունեն արդյոք բիզնես, անշարժ կամ շարժական գույք, որը չեն հայտարարագրել, կամ արդյոք վարում են մի մեքենա, որը հայտարարագրում ներկայացված չէ: Արդյունքում պաշտոնյաները պատասխանել են հանձնաժողովի նամակներին, ինչպես նաեւ իրավապահներն են որոշակի տվյալներ տվել Կառուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Հիմա էլ անճշտություններ են եղել, որից հետո հանձնաժողովը պաշտոնյաների շուրջ նոր գործընթաց է սկսել՝ ստուգելով, համեմատականներ անցկացնելով հին հայտարարագրերի հետ:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՀԵՌԱՑՐԵԼ ՔՊ-ԻՑ

Երեկ հայտնի դարձավ, որ, ՔՊ վարչության որոշմամբ, Թաթուլ Ասիլյանը հեռացվել է կուսակցությունից:

Ինչպես ՔՊ-ից մեզ փոխանցեցին, պատճառը կարգապահական խախտումն է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Թաթուլ Ասիլյանի վերաբերյալ որոշումը վաղուց է կայացված եղել? նա հաճախ է խնդիրներ ունեցել իր թիմակիցների հետ, վիճաբանությունների կենտրոնում հայտնվել:

Մեզ հետ զրույցում Թաթուլ Ասիլյանն էլ պարզաբանեց, որ պատճառը եղել է իր՝ որոշ ժամանակ առաջ արցախցիների վերաբերյալ գրառումը, որը հեռացրել է իր էջից: Չնայած սրան՝ Թաթուլ Ասիլյանն ասաց, որ ընդունում է իր մեղավորությունը եւ շարունակում է պաշտպանել իր արդեն նախկին թիմին:

-Կուսակցությունից շատ ճիշտ են փոխանցել. իմ կարգապահական խախտումն է եղել, ունեցել եմ իմ մեղավորության մասնաբաժինը:

-Ի՞նչ խախտում եք ունեցել: Կմանրամասնե՞ք:

-Ղարաբաղի հետ կապված այդ պահին գրառում էի կատարել, ուրիշ ոչինչ:

-Ձեր ֆեյսբուքյան էջո՞ւմ եք գրառում կատարած եղել:

-Այո՛:

-Բայց մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ այդ գրառումը չկա: Հավանաբար հեռացրե՞լ եք:

-Այո՛, գրառումը հեռացրել եմ երեւի մոտ 2-3 ամիս առաջ:

-Ինչի՞ մասին է եղել այն:

-Ղարաբաղի հետ կապված:

-Բայց կոնկրետ ի՞նչ էր:

-Չեմ կարողանա հիշել՝ կոնկրետ ինչ, բայց որ դրա հիման վրա եմ հեռացված եղել, փաստ է: Որոշակի արցախցիների մասին է եղել խոսքը, որոնք որ դեմ էին մեր իշխանությանը:

-Այսինքն՝ Դուք ընդունո՞ւմ եք Ձեր մեղավորության բաժինը:

-Այո՛, այդ ամենում մեղավոր եմ, բայց դա էական նշանակություն չունի. եթե նույնիսկ ինձ կուսակցությունից հեռացրել են, ես էլի նույն ձեւ հավատարիմ մնալու եմ: Եթե նույնիսկ ինչ-որ հարցով կանգնեմ դատարանի առաջ ու պատասխանատվություն կրեմ, ես էլի շարունակելու եմ կանգնել իրենց կողքին:

-Այսինքն՝ Դուք շարունակում եք մնալ նրանց կողքին, քանի որ Դուք հաճախ եք թե՛ Նիկոլ Փաշինյանի, թե՛ իշխանական այլ պատգամավորների հետ մտերմություն ցույց տալիս, նկարներ հրապարակում:

-Այո՛, քանի որ Նիկոլ Փաշինյանը իմ քաղաքական թիմի առաջնորդն է, եւ շարունակում ու շարունակելու եմ պաշտպանել նրան ու նրանց:

Այս դեպքը չի կարող ինձ նրանց դեմ տրամադրել: Այս դեպքը նշանակություն չունի, ես իմ հարգանքն ունեմ վարչապետի անձի նկատմամբ:

-Ու՞մ հետ տարաձայնություններ ունեք:

-Դե կարող են լինել բազմաթիվ տարաձայնություններ թիմի ներսում: Ուրիշ ոչինչ չկա:

-Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ թիմում շատ են տարաձայնությունները, բայց Ձեր թիմակիցները համակարծիք են եղել այս ամենին, այսինքն՝ Դուք խնդիրներ ունեցել եք այդուամենայնիվ նրանց հետ:

- Եթե դու սխալ ես գործում, ինչպե՞ս կարող են համակարծիք չլինել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՑ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ՝ ԵՊՀ-ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն դարբերաբար ահազանգեր են ստանում, որ համալսարաններում արցախից բռնի տեղահանված ուսանողներին լավ չեն վերաբերվում: Բողոքների շարքը լրացվում էր՝ Արցախի պետական համալսարանի ռեկտորին՝ Արմեն Սարգսյանին լավ չընդունելով: Մասնավորապես՝ ասվում էր, որ նրան տվել են փոքրիկ, ոչ վերանորոգված եւ խոնավ սենյակ: Այս հարցերը հասկանալու համար «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի հետ, որը մեզ հետ զրույցում տվել է պարզաբանումներ այս հարցերի վերաբերյալ:

-Պարոն Հովհաննիսյան, բազմիցս բողոքներ ենք ստանում, որ ԵՊՀ-ում արցախցի ուսանողների հանդեպ կողմնակալ վերաբերմունք են ցուցաբերում:

-Նման խնդիր չկա մեզ մոտ. բոլորը գիտեն, որ արցախցի ուսանողներին լավ են վերաբերվում:

-Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանի հետ հանդիպումներ կամ քննարկումներ եղե՞լ են:

-Իր հետ պարբերաբար ենք հանդիպում ուսանողների հարցերը լուծելու վերաբերյալ, անընդհատ իրար հետ ենք:

-Պարոն Հովհաննիսյան, լուրեր են պտտվում, որ ԱրՊՀ ռեկտորին փոքրիկ, խոնավ սենյակ են տվել եւ նրան լավ չեն վերաբերվում:

-Մենք իրեն շատ լավ ենք վերաբերվում, ինքը շատ գոհ է, իրեն որ հարցնեք, ձեզ մանրակրկիտ կպատասխանի:

Հիշեցնենք, որ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանն այս թեմայով եւս զրուցել էր Հովհաննես Հովհաննիսյանի հետ:

Նրանք պայմանավորվածություն էին ձեռք բերել, որ վերջինս խստորեն պահանջի դասախոսական կազմից արցախցի երիտասարդների հանդեպ լինել հարգալից, ընդգծել, որ նրանք արժանի են իրենց հայրենակիցների կողմից հավասար վերաբերմունքի: Թագուհի Թովմասյանը հավելել է նաեւ, որ ամենօրյա ռեժիմով հետեւողական է լինելու ոչ միայն ԵՊՀ-ում, այլեւ ՀՀ բոլոր բուհերում նմանատիպ խնդիրների բարձրաձայնմանը եւ կարգավորմանը: Կրթական հաստատությանն անհարիր այս դրսեւորման կրկնության դեպքում հանրայնացնելու է անթույլատրելի վարքագիծ ցուցաբերած դասախոսների անուն-ազգանունները:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Ազգային առաջընթաց» կուսակցության վարչության անդամ Հայկ Գրիգորյանի եկամուտները գերազանցում են կուսակցության ղեկավար Հայկ Մարությանի եկամուտները:

Գրիգորյանը հայտարարագրել է 5 անշարժ գույք՝ 2 բնակարան բազմաբնակարան շենքում, 2 անհատական բնակելի տուն եւ 1 հողամաս:

Անհատական բնակելի 2 տները գտնվում են Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որից մեկը ձեռք է բերվել 2018 թվականին, մյուսը՝ 2022 թվականին: Բազմաբնակարան շենքերում գտնվող բնակարաններից մեկը ձեռք է բերվել 2016 թվականին Արաբկիր վարչական շրջանում, իսկ մյուսը՝ 2022 թվականին Կենտրոն վարչական շրջանում: Հողամասը 2019 թվականին ձեռք է բերվել Արմավիրի մարզի Էջմիածին համայնքում:

Գրիգորյանը 2021 թվականին ձեռք է բերել նոր մեքենա՝ 2017 թվականի արտադրության, Nissan մակնիշի:

Նրա բաժնային արժեթղթերը եւ այլ ներդրումները կազմել են 605 հազար ԱՄՆ դոլար եւ 50 հազար դրամ:

Որպես այլ ներդրումներ Գրիգորյանը նշել է «Ամազոն» եւ «Գուգլ» ընկերությունները, որոնցից համապատասխանաբար ստացել է 125 հազար եւ 175 հազար ԱՄՆ դոլար: Այսինքն՝ նա մասնաբաժին ունի նաեւ այս ընկերություններում:

Նրա բանկային ավանդները կազմել են 125 հազար ԱՄՆ դոլար, բանկային հաշիվների մնացորդները կազմել են 30 մլն դրամ, 250 հազար եվրո, 780 հազար ԱՄՆ դոլար: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 14 մլն դրամ, 55 հազար ԱՄՆ դոլար:

Գրիգորյանի՝ հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները կազմել են 477 մլն 503 հազար դրամ, որից դրամով ստացած միակ եկամուտը դա 75 հազար դրամն է Երեւանի քաղաքապետարանից:

963 հազար ԱՄՆ դոլար Գրիգորյանը ստացել է գույքի օտարումից, գործարքի մյուս կողմը եղել է «Ֆինեքս Էնթերփրայզիս Ինք» ընկերությունը, սակայն այդ մասին այլ մանրամասներ նշված չեն:

Գրիգորյանն ունի նաեւ մասնաբաժին «Գրիգորյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ում, որի տնօրենն է հանդիսանում եւ որից էլ ստացել է 121 հազար ԱՄՆ դոլար գումար:

«Հոսթել Ինտերնեյշնալ»-ից էլ որպես եկամուտ ստացել է 144 հազար ԱՄՆ դոլար:

Գրիգորյանի ստացած փոխառությունները կազմել են 8 հազար 700 ԱՄՆ դոլար:

Գրիգորյանը նաեւ բաժնեմասեր ունի «Հոսթել Ինթերնեյշնլ կորպորացիա»-ում 50 տոկոս, «Ագրիլենդ Սիներջի» եւ «Գրիգորյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ում էլ՝ 100-ական տոկոս բաժնեմասեր:

Համեմատության համար նշենք, որ Մարությանն ունի 23 անշարժ գույք եւ 310 մլն տարեկան եկամուտ, իսկ նույն կուսակցության վարչության անդամ Հայկ Գրիգորյանը՝ 5 անշարժ գույք, սակայն 477 մլն տարեկան եկամուտ:

ՆՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ՝ ԱԺ–ՈՒՄ

Երեկ Ազգային ժողովի պատգամավորները մեկ րոպե լռությամբ հարգեցին Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի հիշատակը: Ինչպես տեղեկացնում է «Ժողովուրդ» օրաթերթը, Ազգային ժողովի հերթական նիստին նման առաջարկով հանդես եկավ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը:

«Մեկ րոպե լռությամբ հարգենք կյանքից անժամանակ հեռացած մեր գործընկեր Մաթեւոս Ասատրյանի հիշատակը»,- ասաց Սիմոնյանը:

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մաթեւոս Ասատրյանը նոյեմբերի 6-ին հանկարծամահ է եղել:

Ավելի ուշ Տիգրան Պարսիլյանը երդմամբ ստանձնեց պատգամավորական լիազորությունները:

«Հանուն համազգային նպատակների իրականացման եւ հայրենիքի բարգավաճման ու հզորացման՝ երդվում եմ բարեխղճորեն կատարել ժողովրդի առջեւ ունեցած պարտավորություններս, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ու օրենքները, նպաստել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության ու շահերի պահպանմանը, անել ամեն ինչ քաղաքացիական համերաշխության, ազգային եւ համամարդկային արժեքների պահպանման համար»,- «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ասաց Պարսիլյանը:

Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի հերթական նիստում Լեւոն Քոչարյանը եւս երդմամբ ստանձնեց պատգամավորական լիազորությունները:

«Հայաստան» խմբակցության նախկին պատգամավոր Արմեն Չարչյանի կողմից պատգամավորական մանդատը վայր դնելուց հետո «Հայաստան» դաշինքի ընտրական ցուցակի հաջորդ երեք թեկնածուները, որոնք պետք է ստանձնեին պատգամավորական մանդատը, ինքնաբացարկի դիմում են ներկայացրել: Ընտրական ցուցակի հաջորդ համարը Լեւն Քոչարյանն էր, որը մինչ մանդատ ստանալը կալանավորված էր: Լեւոն Քոչարյանին պատգամավորի մանդատ տրամադրելու կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումից հետո նա ազատ արձակվեց:

Ավելի ուշ Լեւոն Քոչարյանը ֆեյսբուքյան իր էջում հայտնեց, որ ինքը եւ Արթուր Սարգսյանն այցելել են «Նուբարաշեն» ՔԿՀ:

«Սիրելի՛ հայրենակիցներ, այսօր՝ պատգամավորական երդումից հետո, Արթուր Սարգսյանի հետ այցելեցինք «Նուբարաշեն» ՔԿՀ՝ տեսակցելու ապօրինի կալանքում գտնվող մեր հայրենակիցներին:

Այս ամենը կազմակերպողներն ու կատարողները պիտի պատասխանատվության ենթարկվեն, որպեսզի հաջորդող ցանկացած իշխանության մտքով անգամ չանցնի դատական ու իրավապահ համակարգը ծառայեցնել ընդդիմախոսներին ճնշելու համար», - Facebook-ում գրել է Քոչարյանը:

ԴԱՏԱԿԱՆ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԸ, ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆ ՈՒ ԽՄԲԱԳԻՐԸ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը վիրավորանքի հիմքով հայց է ներկայացրել՝ ընդդեմ պատգամավոր Աննա Մկրտչյանի եւ Hayeli.am կայքի գլխավոր խմբագիր Անժելա Թովմասյանի:

Հայցերը մուտքագրվել են Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, երկուսն էլ վերաբերում են վիրավորանքի համար ներողություն խնդրելուն եւ փոխհատուցում վճարելուն:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Hayeli.am կայքի գլխավոր խմբագիր Անժելա Թովմասյանը նշում է՝ Ալեն Սիմոնյանն իրենից պահանջում է ներողություն խնդրել եւ 3 մլն 590 հազար դրամ փոխհատուցում. «Ալեն Սիմոնյանն իր տելեգրամյան ալիքում տեղեկացրել էր, որ հայց է ներկայացնելու իմ եւ պատգամավոր Աննա Մկրտչյանի դեմ: Հայցը ստացել եմ, այն վարույթ է ընդունվել: Մոտ 2-3 ամիս առաջ Tert.am-ը հրապարակել էր Ալեն Սիմոնյանի մի գրառում, որտեղ նա ասել էր. «Մեր երեխաներին ազատ, անկախ Հայաստան պետք է ժառանգենք»: Այդ գրառման տակ սոցիալական իմ էջից գրվել է «պոռնիկ» բառը, չնայած այդտեղ ավելի վատ բաներ կար գրված, բայց Սիմոնյանը վստահաբար թիրախավորել է ինձ եւ իմ լրատվամիջոցը: Նա ներողություն է պահանջում խնդրել եւ 3 մլն 590 հազար դրամ փոխհատուցում՝ իբրեւ վիրավորանքի համար:

Հիմա նախ ինքը պետք է ապացուցի, որ այդ բառն իրեն է ուղղված: Դա սոցիալական ազատ տիրույթ է, եւ ես, կարող է, օրինակ, նկատի եմ ունեցել Էրդողանին: Այնտեղ գրված չի, որ այդ բառն Ալեն Սիմոնյանին է ուղղված, ուստի տարօրինակ է, որ իր վրա է վերցրել, բայց եթե այդ բառը լսելուց իրեն թվում է, որ իրեն են նկատի ունեցել, ուրեմն իր խնդիրն է դա: Գուցե ինքն ավելի լավ գիտի՝ում են նման բառեր ասում եւ ինչի համար, կամ գուցե շատ լավ գիտի՝ինքն ինչն է արել, որ արժանի է նման բառերի. դա իր խղճի, մտքի եւ բարոյական արժեհամակարգի հարցն է»,- ասաց Անջելա Թովմասյանը:

Ըստ զրուցակցի՝ ակնհայտ է, որ Ալեն Սիմոնյանի նպատակն է թիրախավորել լրատվամիջոցը. «Նա խնդիր ունի լռեցնելու մեզ: Սիմոնյանը մոտ 16 հոգու նկատմամբ նման գործընթաց է սկսել: Ենթադրում եմ՝ շեֆն է հանձնարարել, որ մի քանի լրատվամիջոցով եւ քաղաքական ակտիվով, ընդդիմադիր գործիչներով ինքը կզբաղվի, մի քանիսով շեֆը կզբաղվի:

Սովորաբար նման ակտիվություն, դատական պրոցեսներ, քաշքշուկներ սկսում են այն ժամանակ, երբ չարաբաստիկ նոր վտանգներ կան կախված մեր երկրի գլխին: Մահաբեր գործընթացներից առաջ սովորաբար նման դատական քաշքշուկներ են իշխանությունները սկսում: Ենթադրելի է, որ մութ ամպեր են կուտակվել հիմա Հայաստանի գլխին, ութ գյուղերից են խոսում, միջանցքի մասին են խոսում: Եթե այս ամենը դիտարկենք, ապա ակնհայտ է, որ լռեցնելու պրոցես է գնում: Դուք տեսեք նրա պահանջած մեծ գումարը, ուզում են լրատվամիջոցին վերջնականապես խորը ճգնաժամի առաջ կանգնեցնել, այս խնդիրներն են լուծում:

Ի դեպ, Ֆրանսիայում էլ նման անվանումով քաղաք կա. շատ հավանական է, որ հենց այդ քաղաքն եմ նկատի ունեցել: Ինչո՞ւ է Սիմոնյանը մտածում, որ իրեն եմ նկատի ունեցել»,- հավելեց Անժելա Թովմասյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԴԱԴԱՐ

Իսրայելի պաշտպանության բանակը չորս ժամով հումանիտար դադար է հայտարարել Գազայում՝ թույլ տալով խաղաղ բնակիչներին լքել քաղաքը:

Խոսքը տակտիկական դադարի մասին է հումանիտար նպատակներով:

Իսրայելի բանակը նույնպես խաղաղ բնակիչներին կոչ է արել այդ ընթացքում դեպի հարավ շարժվել:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Մ-4 միջպետական ճանապարհին կիրականացվի երթեւեկության կազմակերպման փոփոխություն:«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝այս մասին հաղորդագրություն է տարածել Ճանապարհային դեպարտամենտը:

«Իրականացրել ենք Մ-4 (Երեւան-Սեւան) միջպետական նշանակության ավտոճանապարհի որոշ տեղամասերի ուսումնասիրություններ... եւ երթեւեկության անվտանգության բարելավման նպատակով պատրաստվել են կմ10+300, կմ12+150, կմ14+660 եւ կմ16+330 տեղամասերի երթեւեկության կազմակերպման նոր սխեմաներ:

Երթեւեկության կազմակերպման առաջարկվող նոր սխեմաների համաձայն՝ առաջիկայում նախատեսվում է նշված տեղամասերում փակել հետադարձները. փոխարենը վարորդները հետադարձի համար կարող են օգտվել Պտղնու տրանսպորտային հանգույցից եւ Աբովյանի տրանսպորտային հանգույցից»,- ասված է հաղորդագրության մեջ:

Երթեւեկության կազմակերպման փոփոխության ժամկետների մասին կտրվի լրացուցիչ ինֆորմացիա:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

Բելառուսական կողմի նախաձեռնությամբ տեղի է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ:

Քննարկվել են ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի՝նոյեմբերի 23-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում կայանալիք նիստի կազմակերպման հետ կապված հարցեր:

Վարչապետ Փաշինյանը Բելառուսի նախագահին տեղեկացրել է, որ չի կարողանա մասնակցել նիստին, եւ հույս հայտնել, որ ՀԱՊԿ գործընկերներն ըմբռնումով կվերաբերվեն այդ որոշմանը:

ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եվրամիությունը 2023 թվականին 30%-ով ավելացրել է զինամթերքի արտադրությունը եւ մոտեցել տարեկան 1 մլն արկ արտադրությանը:

Ինչպես հայտնում է «Ժողովուրդ» օրաթերթը, այդ մասին հայտարարել է ներքին շուկայի հարցերով եվրահանձնակատար Թիերի Բրետոնը:

«2023 թվականի փետրվարից մենք 30 տոկոսով ավելացրել ենք զինամթերքի արտադրությունը: Այսպիսով, մենք կկատարենք տարեկան 1 միլիոն արկ արտադրելու խնդիրը», - ասել է նա:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ԽՈՇՈՐ ՁԿՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ազգային անվտանգության ծառայությունը գործընթաց է սկսել տարբեր վարչական շրջանների թաղապետարանների գործունեության մասով: Դրանք մեկը մյուսի ետեւից բերման ենթարկելու եւ ձերբակալելու գործընթացներ են, սակայն նկատենք, որ նախաքննական մարմինը ընկել է մանր ձկների հետեւից, եւ խոշոր ձկները մնացել են ստվերում:

Այսպիսով, նոյեմբերի 2-ին հրապարակվեց, որ բերման են ենթարկվել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին թաղապետ, ՔՊ-ական Արման Բարխուդարյանը եւ թաղապետարանի մի քանի աշխատակիցներ: Բերման ենթարկվողների թվում էին համայնքապետարանի կոմունալ բաժնի պետ Աշոտ Խաչատրյանը, առեւտրի բաժնի պետ Հրայր Արամյանը եւ կոմունալի աշխատակից Վան Հարությունյանը, որոնք ավելի ուշ հարցաքննվել եւ ազատ էին արձակվել: Վերջիններիս բերման ենթարկելու գործընթացը կապված էր գնումների գործընթացում որոշակի կոռուպցիոն ռիսկերի հետ:

Եվ, ահա, երեկ էլ հայտնի դարձավ, որ ԱԱԾ-ն է տվյալներ ստացել, ու Հակակոռուպցիոն կոմիտեում քննություն է իրականացվել, ձերբակալվել են պաշտոնյաներ:

Մասնավորապես՝ Տիգրան Մարտիրոսյանը, զբաղեցնելով Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության եւ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի պետի պաշտոնը, նույն բաժնի աշխատակից Արման Հ.-ի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում տարբեր անձանցից ստացել են ընդհանուր շուրջ 1մլն 700 հազ. ՀՀ դրամ կաշառք: Նրանց ձերբակալել են շինթույլտվությունների, տարբեր ընկերություններին կաշառքի դիմաց արտոնություններ տալու համար:

Այս պատմության մեջ ուշագրավն այն է, որ իրավապահները ընկել են մանր ձկների հետեւից: Հարց է առաջանում՝ ինչո՞վ է զբաղված եղել թաղապետ Սամվել Ղուկասյանը, որ իր աշխատակիցները թիկունքում կոռուպցիոն գործարքների մեջ են եղել: Դատելով իրավիճակից՝ կամ նա տեղեկացված չի եղել, թե ինչ է կատարվում թաղապետարանում, կամ անգործություն է դրսեւորել: Հուսանք՝ իրավապահները չեն խնայի Սամվել Ղուկասյանին եւ նրան եւս կհարցաքննեն՝ պարզելու իր հնարավոր մասնակցությունը այս դեպքին: Հետեւենք զարգացումներին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱԱԾ

ՇԱՀԲԱՄԱՆՅԱՆԸ ԿՀԱՐՑԱՔՆՆՎԻ ⇨

Գլխավոր դատախազությունը ստացել է ԼՂ նախագահ Սամվել Շահրամանյանի դիմումը եւ ուղարկել է ԱԱԾ. այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ Հայաստանի գլխավոր դատախազությունից:

Հիշեցնենք՝ Սամվել Շահրամանյանը նոյեմբերի 8-ին նամակով դիմել էր գլխավոր դատախազին՝ խնդրելով սոցցանցերի այն հրապարակումները, ըստ որոնց՝ ԼՂ բարձրաստիճան պաշտոնյաները կոռուպցիոն չարաշահումներ են արել, ընդունել որպես հանցագործության մասին հաղորդում եւ քննության առնել:

ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԵՆ ՄԵԿՈՒՍԱՐԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Երեւանի նախկին քաղաքապետ Ալբերտ Բազեյանին Նուբարաշենի բանտից տեղափոխում են ԱԱԾ մեկուսարան: Մեզ հայտնի դարձավ, որ առերեսումներ են իրականացվելու Ալբերտ Բազեյանի եւ գործով անցնող անձանց միջեւ:

Տեղեկությունը հաստատեց նաեւ Ալբերտ Բազեյանի պաշտպան Գեորգի Մելիքյանը:

Հիշեցնենք, որ, ըստ ԱԱԾ-ի, «Խաչակիրներ» ռազամահայրենասիրական ՀԿ անդամները, ինչպես նաեւ Ալբերտ Բազեյանը եւ այլ անձինք, ունենալով հակահիշախանական հայացքներ, ՀՀ կառավարության անդամների եւ ղեկավարի նկատմամբ գաղափարական թշնամանք, նախնական համաձայնության գալով միմյանց հետ, պայմանավորվածություններ են ձեռք բերել իրենց մոտ պահվող զենք-զինամթերքը որպես հանցագործության գործիք օգտագործելու միջոցով կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու եղանակով եւ դրա սպառնալիքով զավթելու իշխանությունը, մասնավորապես՝ Սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով տիրանալու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններին: Հանցավոր խմբի անդամները ձեռք են բերել հեռահաղորդակցության սարքեր, հեռախոսային ու այլ կապը խլացնող սարքեր, հանցանքի կատարումը հեշտացնող միջոցներ եւ գործիքներ, ինչպես նաեւ դիտավորությամբ ստեղծել են այլ պայմաններ՝ այդկերպ նախապատրաստվելով կատարել նախնական համաձայնությամբ, խմբի կազմում իշխանության յուրացում, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել սկսել իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը, նախապատրաստվող առանձնապես ծանր հանցագործությունը բացահայտվել եւ խափանվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆՈՒՆՆԵՐ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՆ

Երեկ, ՀՀ ազգային անվտանգության ծառայության Երեւանի քաղաքային վարչությունում ստացված տվյալների հիման վրա, ԱԱԾ քննչական գլխավոր վարչությունում նախաձեռնված եւ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացվող քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Տ. Մ.-ն՝նույն Տիգրան Մարտիրոսյանը, որը համայնքի ղեկավար Սամվել Ղուկասյանի հովանավորյալն է եւ սիրելին, զբաղեցնելով Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության եւ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի պետի պաշտոնը, նույն բաժնի աշխատակից Ա. Հ.-ի՝նույն Արմանի հետ, որը Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Ռոմանոս Սաֆարյանի սանիկն է եւ նրա բերած կադրը, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում տարբեր անձանցից ստացել են ընդհանուր շուրջ 1մլն 700 հազ. ՀՀ դրամ կաշառք:

Ըստ նախաքննությամբ ստացված տվյալների՝վերը նշված անձինք, իրենց ծառայողական լիազորությունները, ինչպես նաեւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, Կենտրոն վարչական շրջանի՝ հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքներն իրականացնող ընկերության օգտին հրատապ գնման ընթացակարգերի մասին ընկերության տնօրենին տեղեկացնելու եւ անհրաժեշտ խորհրդատվությամբ այդ ընթացակարգերին տվյալ տնտեսվարողի պարտադիր մասնակցությունն ապահովելու համար 2023 թվականի հուլիսի 11-ին նրանից ստացել են 1.000.000 ՀՀ դրամ կաշառք:

Բացի այդ, Տիգրան Մարտիրոսյանը, դարձյալ Արման Հ.-ի հետ նախնական համաձայնությամբ, իրենց ծառայողական լիազորություններն ու ազդեցությունն օգտագործելով, Ն. Ա.-ին եւ Ա. Ա.-ին փաստացի պատկանող՝ Երեւան քաղաքում գործող սրճարանների դիմաց անցուղիների տեղադրման եւ նախատեսված գազոնային ծածկի հաշվին մայթի լայնացման աշխատանքներն անտեսելու ու չարձանագրելու համար նրանցից 2023 թվականի հուլիսին եւ օգոստոսին ստացել են շուրջ 700.000 ՀՀ դրամ կաշառք:

Այսինքն՝ մայթը անօրինական լայնացրել են, իսկ Տիգրան Մարտիրոսյանն ու Արման Հ.-ն գումարի դիմաց աչք են փակել այդ ամենի վրա, այնինչ իրենց գործառույթը ճիշտ հակառակն է:

13.11.2023թ. կաշառք ստացած երկու պաշտոնյաներն ու վերջիններիս կաշառք տված անձանցից երկուսը ձերբակալվել են:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 13-ից 14-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 76 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԱՄԿԱԾԵԼԻ ՎԱՃՔԵՐԸ

2021թ. օգոստոսի սկզբից Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղի եւ Բերդ համայնքի Այգեպար գյուղի տարածքներում հաստատվեցին Ռուսաստանի Դաշնության զինծառայողների խմբեր:

Հայաստանի անկախանալուց հետո Տավուշի մարզի սահմանամերձ տարածքում ռուսական զինուժ մինչ այդ տեղակայված չի եղել, հայ-ադրբեջանական սահմանը մշտապես պաշտպանել ու պաշտպանում են ՀՀ ՊՆ զորամասերը: Կառավարության առաջարկով Նոյեմբերյան համայնքի ավագանին Ոսկեպար գյուղի վարչական տարածքից 2 հեկտար հող նվիրաբերեց, այդ հողում՝ Ոսկեպարի սահմանագոտում, մոդուլներից ռուսական զինուժի համար հավաքվեց-կառուցվեց զորանոց, միջպետական ավտոճանապարհի եզրին տեղադրվեց հայ-ռուսական խաչքար: Նման զորանոց կառուցվեց նաեւ Բերդ համայնքի Այգեպար գյուղում՝ խորհրդային տարիներին գործած փոքր օդանավակայանի տարածքում: Ավելի քան երկու տարի է, ինչ ռուսական զինուժը Տավուշի մարզում է, սակայն ո՛չ իրենք, ո՛չ էլ Հայաստանի իշխանությունը նրանց գործառույթների մասին ոչինչ չեն ասում: Ենթադրվում է, որ ռուսական զինուժը պետք է իրականացներ հայ-ադրբեջանական սահմանի սահմանագծում եւ սահմանազատում: Ոսկեպար գյուղի բնակիչները պարբերաբար տեսնում են, որ իրենց գյուղի տարածքում տեղակայված զորանոցից ռուս զինծառայողները վազում են դեպի հայկական տարածքի խորքը՝ դեպի Վերին Ոսկեպար: Ոսկեպարցիները կասկածում են, որ ռուս զինծառայողների երկար վազքերը ոչ միայն մարտական պատրաստվածության, մարզական կենսակերպի համար են, այլեւ կարող են հետախուզական ու այլ նպատակներ ունենալ:

ՄԹԵՐԵԼ Է, ԳՈՒՄԱՐԸ ՉԻ ՏՎԵԼ

Տավուշի մարզպետարանի տվյալներով՝ 2023թ. սեպտեմբերի դրությամբ մարզի խաղողագործների եւ խաղող մթերող կազմակերպությունների միջեւ կնքվել է ընդհանուր առմամբ 4850 տոննա խաղողի մթերման պայմանագիր, որից «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ի Բերդի մասնաճյուղը խաղողագործների հետ կնքել է 3500 տոննայի մթերման պայմանագրեր, «Իջեւանի գինու եւ կոնյակի գործարան» ԲԲԸ-ն՝ 1350 տոննայի մթերման պայմանագրեր: Մարզպետարանը հետո տեղեկացրել է, որ այս տարի «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ Բերդի մասնաճյուղը խաղողագործներից ընդունել է 2498 տոննա խաղող, «Իջեւանի գինու եւ կոնյակի գործարան» ԲԲԸ-ն՝ 323.4 տոննա խաղող, «Երեւանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ Դեբեդավանի գինու գործարանը՝ 565.4 տոննա, Կողբ գյուղում գործող «Կանաչ գյուղ» ՍՊԸ-ն՝ 94.3 տոննա խաղող: Տավուշի մարզում ընդհանուր մթերվել է 3481.1 տոննա խաղող: Մարզպետարանից հայտնել են նաեւ, որ մթերված խաղողի դիմաց գումարներն ամբողջությամբ վճարել են «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ Բերդի մասնաճյուղը, մասամբ՝ «Կանաչ գյուղ» ՍՊԸ-ն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՏՃԱՌՆԵՐ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԱԶԱՏԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ուսումնագիտական աշխատանքների հարցերով պրոռեկտոր Ցոլակ Ակոպյանը ֆեյսբուքյան իր էջում հրապարակում է արել եւ նշել. «Հատված՝ ինձ աշխատանքից ազատելու հրամանից: Իսկական իրավաբանական «գլուխգործոց» եւ ոչ միայն իրավաբանական: Լեզվաբան-հայագետի ստորագրած հրաման՝ ԺԱՄԱՆԱԿԱՏԱՐ պաշտոնակատար...»:

Ցոլակ Ակոպյանը կից հրապարակել է փաստաթուղթ, որից հասկանում ենք՝ Ցոլակ Ակոպյանի հեռացման պատճառը եղել է Armlur.am-ին տված հարցազրույցը:

Այս եւ այլ հարցեր քննարկել ենք նախկին պրոռեկտոր Ցոլակ Ակոպյանի հետ:

-Պարոն Ակոպյան, ըստ Ձեր հրապարակած փաստաթղթի՝ Ձեզ աշխատանքից հեռացնելու պատճառներից մեկը ArmLur.am-ին տված Ձեր հարցազրույցն է եղել: Կմանրամասնե՞ք նաեւ՝ ինչ սպառնալիքներ են Ձեզ ուղղվել:

-Դա ինձ աշխատանքից ազատման հրամանն է, ավելի կոնկրետ՝ հրամանի 14 էջերից մեկը, որում հենց ձեզ տված հարցազրույցի մասին է մեջբերվում: Ավելի զավեշտալի էջեր կան, որոնք չեմ հրապարակել: Շանտաժներ ինձ հասել են երրորդ անձի միջոցով, առաջարկվել է կամ դիմում գրել, կամ ինչ-որ քրեական գործեր են հարուցվելու:

Մի որոշ ժամանակ անց, որքանով ես տեղյակ եմ, ԵՊՀ-ից ինձ բերման ենթարկելուց հետո ես տեղեկացա, որ քրեական գործեր են հարուցվել իմ դեմ՝ կապված իմ գործունեության հետ, եւ ես վստահ եմ, որ ոչ մի քրեական խախտում չեմ կատարել:

Մինչեւ այսօր ես ոչ մի կառույց չեմ կանչվել, չեմ հարցաքննվել, չգիտեմ՝ խոսքն ինչի մասին է: Նրանք խախտել են իմ անմեղության կանխավարկածը, նույնիսկ որպես վկա ինձ չեն կանչել, նույնիսկ մեղադրանք չկա իմ դեմ: Շատ բաներ ես հիմա չեմ կարող խոսել, քանի որ ենթադրում եմ՝ կա նախաքննական գաղտնիք պարունակող ինֆորմացիա:

-Պարոն Ակոպյան, Դուք հաճախ եք նշել, որ Բրյուսովի համալսարանի ռեկտորի ժ/պ Դավիթ Գյուրջինյանը ապօրինի է զբաղեցնում այդ պաշտոնը: Ի՞նչ եք կարծում, Ձեր պաշտոնանկությունը ապօրինի չի՞ եղել:

-Իհարկե ապօրինի է, ոչ միայն այն, որ նա ապօրինի ռեկտոր է, այլեւ այն, որ նա ինձ ազատել է աշխատանքային օրենսգրքի հոդվածի համաձայն, ըստ որի՝ իբր ես չեմ համապատասխանում իմ պաշտոնին: Այս պնդումը հիմնավորող որեւէ փաստ չկա: Ինձ ազատել են 4 պատճառի հիմնավորմամբ, որից 2-ը վերաբերում են այդ քրեական գործին, որը տեղի է ունեցել իմ՝ դեկան եղած ժամանակ, ոչ թե պրոռեկտոր եղած ժամանակ: Այսինքն՝ սա կապ չունի պրոռեկտորի պաշտոնին չհամապատասխանելու հետ: 3-րդ կետը վերաբերում է նրան, որ ես, իբրեւ, պրոռեկտոր եղած ժամանակ 2 հոգու սխալ նկատողություն եմ տվել: Այսինքն՝ ըստ այդ կետի՝ ես կատարել եմ ռեկտորի աշխատանքը, քանի որ նկատողություն անելը չի մտնում պրոռեկտորի գործունեության մեջ: 4-րդ հանգամանքը, որը պատճառ է դարձել աշխատանքից ազատման, եղել է ֆեյսբուքյան գրառումները, հարցազրույցները, հայտարարությունները: Էս հրամանը ջախջախվելու է դատարանում:

-Պարոն Ակոպյան, Ձեզնից բացի, այլ անձանց, աշխատակիցների, դասախոսների վրա կա՞ն ճնշումներ:

-Այո՛, շատ դասախոսների ժամեր չտրամադրվեցին: Ոչ միայն ճնշումներ են, այլեւ նստած հետեւում են՝ ով ինչ գրեց եւ ինչ լայքեց «Ֆեյսբուք»-ում: Ես անձամբ խնդրել եմ իմ գրածները «Ֆեյսբուք»-ում չլայքել, որովհետեւ մարդիկ նստած հետեւում են՝ ով լայքեց, հետո նրանց նկատմամբ սկսվում է գործողություն եւ նկատողություններ: Խնդրել եմ՝ իմ գրածները չլայքեն, որպեսզի չհայտնվեն այս ճնշումների տակ: Ինչ ես չեմ պատկերացրել, որ կարող է լինել 21-րդ դարում համալսարանում, էդ մարդը իրականացրեց:

-Պարոն Ակոպյան, ի՞նչ տեղեկություններ ունեք Բրյուսովի ռեկտորի ընտրությունների վերաբերյալ:

-Իրենք իրավունք չունեն ռեկտորի մրցույթ հայտարարել. կարեւոր է՝ էս պահին դատական գործընթաց է գնում, տիկին Հարությունյանն իր չընտրվելը վիճարկել է դատարանում, իրավական առումով իրավունք չունեն ընտրություն հայտարարել: Բայց քանի որ մեր երկրում հարցերը լուծվում են հակահիրավական միջոցով, չեմ բացառում, որ մի օր սենց անօրինական ձեւով մրցույթ հայտարարեն: Ասեմ նաեւ, որ վերջերս հաստատվեց հոգաբարձուների խորհրդի կազմը, քանի որ Ժաննա Անդրեասյան անուն-ազգանունով նախարարը չէր բարեհաճում կազմել խորհրդի կազմ, երկու ամիս գրեթե բուհը մնացել է առանց հոգաբարձուների խորհրդի: Հաստատված կազմը ոտքից գլուխ զավեշտ է:

-Ի՞նչն է զավեշտ, կմանրամասնե՞ք:

-Փոխվարչապետը, որը քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ է, խորհրդի անդամ է: Վարչական պաշտոն զբաղեցնող անձինք կան, Գյուրջինյանի նախկին տեղակալն է ընդգրկված խորհրդի ցանկում, Գյուրջինյանի մոտ ընկեր Լալիկ Խաչատրյանը Մանկավարժական համալսարանից, դեկանի աղջիկ է ընդգրկված կազմում:

-Պարոն Ակոպյան, արդյոք սա արվում է համալսարանների միացումը իրականացնելու համա՞ր:

-Այո, հնարավոր է: 2027 թվականի Ակադեմիական քաղաքի նախագծով պետք է մնա 4 բուհ՝ չհաշված Մայր բուհը եւ Բժշկական համալսարանը, որոնք մնալու են Երեւանում: Ըստ այս նախագծի՝ ամեն դեպքում, համալսարանների միացում սպասվում է:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԳՆԱՃԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արդեն տեւական ժամանակ է՝ հեղուկ գազը գրեթե կրկնակի թանկացել է՝ խնդիրներ ստեղծելով այն վարորդների համար, որոնք ցածր գնի պատճառով մեքենան լիցքավորում էին հեղուկ գազով:

Բենզինը սկսել է թանկանալ հունիս ամսից: Վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ 2023թ. հուլիսին հանրապետությունում գրանցվել է բենզինի 11.1% գնաճ, իսկ հունիսին այն թանկացել է 10.5%-ով:

Եթե ամիսներ առաջ հեղուկ գազի գինը 160 դրամ էր, այժմ 220 դրամ է: «Պրեմիում» տեսակի բենզինի 1 լիտրը արդեն իսկ վաճառվում է 570 դրամով: Տնտեսագետ եւ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս Թադեւոս Ավետիսյանը «Ժողովուրդ» օրաթերթին ներկայացրեց մանրամասներ. «Փաստ է, որ ՀՀ-ն իր պահանջարկը բավարարելու համար ներկրում է ողջ դիզվառելիքը: Առաջին պատճառը ներկրման ոլորտի բարձր մենաշնորհման աստիճանն է, եւ իշխանությունները, ինչքան էլ խոսում են ոլորտում կարգավորումներ բերելուց, միեւնույնն է, փաստը ցույց է տալիս, որ բարձր մենաշնորհման աստիճանը շարունակվում է: Մեր աչքի առջեւ մանրածախ ոլորտում վառելիք վաճառողները սկսել են կենտրոնացնել վաճառքը իրենց լցակետերի շուրջ՝ բենզալցակայանները դարձնելով նաեւ հեղուկ գազ վաճառող կետերի: Երբեմն ներքին պահանջարկը չի համապատասխանում ներկրված քանակին, որն էլ առաջացնում է պակասուրդ, իսկ միջազգային շուկայում կա բենզինի եւ հեղուկ գազի պահանջարկի եւ արժեքի աճ, որն էլ իր հերթին օբյեկտիվ է: Գնաճի միտումը կշարունակվի ապագայում, եթե պետական մարմինը հատուկ կարգավորումներ չանի»:

Նշենք, որ Հայաստան գազ ներմուծվում է Ռուսաստանից, Իրանից եւ Իրաքից: Ռուսական գազի թանկացման պատճառով Հայաստան գազ ներմուծվում է հիմնականում Իրանից եւ Իրաքից, քանի որ, ամեն դեպքում, ավելի մատչելի է, քան ռուսական գազը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 18-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Կորել է «Հարություն Բոյաջյան» ՍՊԸ-ի կնիքը: Հասցե՝ ք. Երեւան, Ավան, Չարենց թաղամաս: Տնօրեն՝ Լիլիթ Գրիգորյան: ՀՎՀՀ՝ 01036476:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայինկասացիա» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Արաբկիր համայնք, Արողության փողոց, թիվ 8 հասցեում գտնվող 767,7 քմ ավտոտնտեսություն, 243,4 ք.մ. շվաքարան, 16,5 քմ սան-հանգույց, 6,1 քմ պահակատուն, 32,0 գծմ պարիսպ եւ 0,17853 հա հողամաս (հողամասի կադաստրային արժեքը վճարված չէ, ներառված է մեկնարկային գնի մեջ): Լոտի մեկնարկային գինը՝ 550000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 01.12.2023թ.-ին եւ 04.12.2023թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 01.07.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 01.07.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ԵՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԸ ԿՀԱՄԱԼՐՎԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը նախատեսում է թվայնացնել իր ենթակայությամբ գործող գրադարանային մշակութային ժառանգությունը, համալրել գրադարանային հավաքածուները:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ նոյեմբերի 14-ին լրագրողների հետ հանդիպմանը ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանն ասաց՝ գրադարաններում էլեկտրոնային սպասարկման ծրագրերի մշակում, մեխանիզմների ներդնում կլինի:

«Դա նշանակում է, որ մարդկանց գրքերը կարող են հասանելի լինել առցանց տարբերակով, եւ այդ նպատակով մենք տեղադրում ենք սերվերներ, որոնք թույլ են տալիս թվայնացնել ամբողջ բազան ու այն հասանելի դարձնել»,-ասաց նա եւ հավելեց՝ կարեւոր ծրագրերից են նաեւ թվայնացված գրականության տվյալների շտեմարանի համալրումը, գրավոր ժառանգության թվայնացումն ու շտեմարաններում մուտքագրումը: Մինչեւ 2027 թվականը նախատեսվում է թվայնացնել 18 մլն գրավոր ժառանգության միավոր: Այս պահի դրությամբ այդ թիվը 13 մլն է: Համայնքներում նորարարական ստեղծագործական բազմաֆունկցիոնալ միջավայր է ձեւավորելու՝ մշակույթի տների եւ գրադարանների հիմքի վրա՝ համագործակցելով մասնավոր հատվածի հետ: Փոխնախարարի խոսքով՝ համայնքներում բազմաթիվ գրադարաններ կան, բայց այսօր մարդկանց այցելություններն այդտեղ քիչ են: Այդ հարցը լուծելու նպատակով զբաղվում են նոր կոնցեպտի մշակմամբ: «Կարող է լինել լոֆթ գրադարան կամ տարածք, որում կլինի եւ՛ գրադարան, եւ՛ մշակութային կենտրոն: Եթե համայնքներում առանձին գրադարանը կամ մշակույթի տունը գուցե թույլ են, հնարավոր է՝ մեկտեղելու դեպքում, եթե նոր շունչ հաղորդվի, հետաքրքիր բան ստացվի»,-նշեց Քոչարյանը: Նա կարեւորեց նաեւ ձեռագրական, գրքային եւ արխիվային հավաքածուների հասանելիության լիարժեք ապահովման նպատակով արհեստական բանականության գործիքակազմի կիրառմամբ որոնողական համակարգերի կատարելագործումը, համայնքային գրադարանների գույքային հավաքածուների գույքագրումն ու հաշվառումը, գրադարաններում նյութատեխնիկական բազայի ապահովումը, թվայնացնող սարքավորումների ձեռքբերումը, տեխնիկական վերազինումը:

ԱՆՁՆԱԳՐԵՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼ

Հայաստանում հին նմուշի անձնագրերի տրամադրումն անհրաժեշտ է երկարացնել: Այս մասին Ազգային ժողովի նիստին՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» օրենքում եւ կից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրինագծերի փաթեթի քննարկման ժամանակ՝ նոյեմբերի 14-ին, ասել է Ներքին գործերի նախարարության պետական միգրացիոն ծառայության ղեկավար Արմեն Ղազարյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դա կտեւի մինչեւ կենսաչափական անձնագրերի նոր համակարգի ներդրումը: Նրա խոսքով՝ 2017թ. լեհական ընկերության հետ պայմանագրի ժամկետը մոտեցել է ավարտին. այն զբաղվել է հայկական կենսաչափական անձնագրերի եւ ID-քարտերի արտադրմամբ եւ սպասարկմամբ: Դրանից հետո սկսվել է նոր եւ ավելի ժամանակակից պահանջներին համապատասխանող անձնագրերի պատրաստումը:

Այդ աշխատանքին զուգահեռ՝ պարբերաբար երկարացվել է հին նմուշի անձնագրերի տրամադրման ժամկետը:

Ծառայության ղեկավարը նշել է, որ կառավարությունը որոշել է լիովին անցնել կենսաչափական անձնագրերի համակարգին: «Նա որոշել է ավելի մասշտաբային բարեփոխումներ իրականացնել եւ կազմակերպել նոր մրցույթ, որը կնախատեսեր նոր՝ արդիականացված համակարգի ներդնում ինչպես Հայաստանի քաղաքացիներին, այնպես էլ օտարերկրացիներին ու փախստականներին փաստաթղթեր տրամադրելու համար»,- ասել է Ղազարյանը:

Նոր լրացումները նախատեսում են նաեւ հին անձնագրերի եւ ID-քարտերի տրամադրման ժամկետի երկարացում մինչեւ նոր համակարգի ներդնումը պետությունմասնավոր հատված համագործակցության շրջանակում:

Օրինագիծն առաջացրել է դժգոհություն ինչպես խորհրդարանական ընդդիմության, այնպես էլ գործող իշխանությունների ներկայացուցիչների շրջանում:

«Սա մեծ խնդիր է: Եվ ես արդեն չեմ խոսում այն մասին, թե ինչ է տեղի ունենում օդանավակայաններում: Անձնագրով մոտենում ես, եւ յուրաքանչյուր երկրորդ երկրում այն վերցնում են, ինչ-որ տեղ գնում, բացում ու փորձում պարզել: Այդ պահին անգամ ամոթ ես զգում հայտարարել այն մասին, որ պաշտոնատար անձ ես: Դիվանագիտական անձնագրերը նույն վիճակում են: Արդեն համարյա թե 2024 թվականն է, իսկ մենք դեռ այսպիսի վիճակում ենք: Սա պետք է լուծել առաջին հերթին»,- ասել է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Էրեբունի, Երկաթուղայինների 5-րդ փողոց, 18 հասցեում գտնվող 173,2 ք.մ. բնակելի տուն եւ 0,02483 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 52900000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 01.12.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 03.01.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՊԱՏՄԵՑ

ԿՐԿՆԱԿԻ ՏԱՐՀԱՆՎԱԾ ԱՐՑԱԽՑԻ ՓՈՔՐԻԿԸ

Արցախցի փոքրիկ Զարուհին 2020թ. 44-օրյա պատերազմից հետո տարհանվել է Արցախի Զրական գյուղից:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցի ժամանակ Զարուհին հիշում է. «Երբ սկսվեց պատերազմը, եղբորս հետ տանը մենակ էի: Մայրիկս զանգեց եւ ասաց, որ շտապ իջնենք նկուղ, հետո կապն ընդհատվեց: Մեզ նկուղ տարավ մեր հարեւանուհին իր երեխաների հետ: Երբ արդեն իմացանք, որ պիտի լքենք Արցախը, հայրս իր ընկերոջ հետ վառելիք գտավ: Նույն ընկերոջ մեքենայով ճանապարհվեցինք (միայն մեքենայի հետեւի մասում 6 հոգով էինք): Մեզ հետ կարողացանք միայն վերցնել եղբորս շքանշանները: Երկու օր մնացինք ճանապարհին: Նախ եկանք Մասիս, մի քանի օր մնացինք այնտեղ, Մասիսից՝ Թալին, իսկ հետո՝ Աշտարակ»:

Զարուհին ասում է՝ երկու պատերազմները համընկան իր ծննդյան հետ: 44-օրյա պատերազմի ժամանակ նա Զրական գյուղում էր, երբ սկսվեց պատերազմը: Անհամբերությամբ սպասում էր հոկտեմբերի 1-ին, որ նշեր իր տարեդարձը, սակայն ինչպես Զարուհին է ասում, սիրտ չուներ ծնունդ նշելու. հայրիկը տանը չէր, իսկ առանց հոր նա, հաստատ, ծնունդ չէր նշի: Նույն անհամբերությամբ սպասում էր նաեւ այս ծնունդին, երբ կլրանար իր 10 տարին, սակայն այս անգամ էլ հիշում է գաղթի օրերը:

«Մենք Զրականից տարհանվելուց հետո վարձով բնակվում էինք Ստեփանակերտի Կնունյանցների 28/20 հասցեում. երբեք չեմ մոռանա այդ հասցեն: Կարճ ժամանակ հետո այդ հասցեն ինձ Զրականի պես հարազատ էր դարձել: Մենք մեզ լավ էինք զգում այնտեղ, ուրախ, երջանիկ: Հիշում եմ բլոկադայի ծանր օրերը, երբ 3 օր առանց հաց էինք մնացել: Հերթ պահում էինք, բայց այդ հերթը օրեր շարունակ մեզ չէր հասնում: Երբ առանց հաց էինք ճաշում, մաման մեզ միշտ սփոփում էր՝ ասելով, որ բլոկադան մի օր կավարտվի, եւ մենք ծիծաղով կհիշենք այդ օրերը»,- պատմում է 10-ամյա Զարուհին: Իհարկե, բլոկադան ավարտվեց, սակայն նրա ավարտն ավելի ծանր եղավ, քան հենց բլոկադան՝ իր ողջ գույներով: Այժմ բնակվում են Աշտարակում 4 հոգով՝ հայրը, մայրը, եղբայրը եւ ինքը: Ապրում են վարձով 2 սենյականոց տան մեջ: Տանը բացակայում է գազամատակարարումը: Ինքը եւ եղբայրը հաճախում են դպրոց: Հայրը առողջական խնդիրների պատճառով հիվանդանոցում է, իսկ մայրը հոգում է հոր խնամակալությունը: Պետությունից աջակցություն ստացել են, բայց այն մի կերպ հերիքում է տան վարձին եւ ամենօրյա ծախսերին: Ակնկալում են աջակցություն, որ կարողանան աշխատանք գտնել ու շուտ ոտքի կանգնել:

ԱՐՑԱԽ

ԹԵՐԹԸ՝ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«Ազատ Արցախ» հանրապետական թերթը տարիների ընթացքում տարբեր անվանումներով ու կարգավիճակով է ներկայացել ընթերցողին: Թերթը լուսաբանել է արցախյան հերոսամարտը, զինադադարից հետո՝ քայքայված տնտեսության վերականգնման, նորաստեղծ հանրապետության պետական կառույցների ստեղծման, Արցախի արդար դատը համաշխարհային հասարակությանը ներկայացնելու, հանրապետության մշակութային, սոցիալ-տնտեսական բարեփոխումների, կրթության, առողջապահության եւ այլ հարցեր:

Իր հարյուր տարիների ընթացքում ունեցել է բազում վերելքներ ու դժվարություններ, ենթարկվել փորձությունների, բայց, միեւնույնն է, եղել է Արցախի պատմության ճիշտ արտացոլանքն ու ուղեկիցը:

Այսօր Արցախի հայաթափման եւ որպես պետություն լուծարման պայմաններում թե ինչ ճակատագրի պիտի արժանանա «Ազատ Արցախ» հանրապետական թերթը, պարզաբանում է թերթի գլխավոր խմբագիր, հրապարակախոս, Արցախի գրողների միության նախագահ Նորեկ Գասպարյանը: «Այսօր ավելի կարեւոր է թերթի լինելը, քան վերջին 4-5 տարիների ընթացքում էր: Ինչո՞ւ: Որովհետեւ մարդկային ճակատագրի, ժողովրդի ու երկրի այս վիճակում ժողովրդին համակ ու ամփոփ պահել կարող է միայն թերթը:

Այսօր հայաստանյան գործող բոլոր լրատվամիջոցները միասին չեն կարող կատարել այն գործը, ինչ կարող է անել թերթը, թեպետ հիմա, ինչպես տեսնում եմ, շատ քչերին է թերթը հետաքրքրում»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշել է Նորեկ Գասպարյանը՝ հավելելով, որ փորձելու է բոլոր հնարավոր քայլերը՝ թերթը թեկուզ էլեկտրոնային տարբերակով պահելու:

«Փորձում եմ գտնել հովանավորների, որպեսզի կարողանանք գոնե էլեկտրոնային տարբերակով թերթը պահպանել, սակայն դեռ ոչ մի արձագանք չենք ստացել: Թվում է՝ ժամանակակից այս աշխարհում թերթն այլեւս ոչ մեկին չի հետաքրքրում: Ստեփանակերտում եւս վերջին 6-7 ամիսներին աշխատել ենք էլեկտրոնային տարբերակով, քանի որ ճանապարհները փակ էին, իսկ թերթը տպագրվում էր Երեւանում՝ «Անտարես» տպագրատանը»,- պարզաբանում է Ն. Գասպարյանը:

Խմբագրի խոսքով՝ թերթի բաժանորդների թիվը 44-օրյա պատերազմից հետո ակնհայտորեն նվազել է՝ պայմանավորված Արցախի տարածքների կորստի հետ: Պատերազմից հետո թերթի բաժանորդների թիվը տատանվում էր 150-160 թվերի շրջանում:

Հավելում. «Ազատ Արցախ» Հանրապետական թերթը տարբեր անուններով լույս է տեսնում՝ 1923 թվականից սկսած:

Նախ լույս է տեսել Շուշիում (1923-1925), ապա 1925 թվականից՝ Ստեփանակերտում: 1923 թվականին թերթը լույս է տեսել «Ղարաբաղի գեղջուկ», 1923-1940 թվականներին եւ 1989-1992 թվականներին՝ «Խորհրդային Ղարաբաղ», 1940-1989 թվականներին՝ «Սովետական Ղարաբաղ», 1992 թվականի ապրիլից - 1995 թվականը՝ «Արցախ», 1995-1998 թվականներին՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» անուններով:

1998 թվականից «Ազատ Արցախ» հանրապետական թերթը հանդիսանում է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի եւ կառավարության պաշտոնաթերթը:

ՍՊՈՐՏ

ԾԱՆՐՈՐԴՆԵՐԸ՝ ՄԵՔՍԻԿԱՅՈՒՄ

Ծանրամարտի Հայաստանի երիտասարդական հավաքականը մեկնել է Մեքսիկա եւ կմասնակցի Գվադալահարա քաղաքում անցկացվելիք աշխարհի երիտասարդական առաջնությանը. հաղորդում է ՀԱՕԿ-ի կայքը:

Ավագ մարզիչ Մելիք Ղուկասյանի ղեկավարությամբ մրցահարթակ դուրս կգան Ալեքսանդրա Գրիգորյանը (55 կգ), Աննա Ամրոյանը (76 կգ), Էմմա Պողոսյանը (81 կգ), Գոռ Սահակյանը (67 կգ), Մարտին Պողոսյանը (73 կգ), Սուրեն Գրիգորյանը (89 կգ) եւ Գարիկ Կարապետյանը (102 կգ):

Առաջնությունը կավարտվի նոյեմբերի 23-ին:

ՉԵՆ ՕԳՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻՆ

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» ֆուտբոլիստներ Կրիստիան Էրիկսենն ու Ռասմուս Հոյլունը վնասվածքների պատճառով այս ամիս չեն օգնի Դանիայի հավաքականին. հաղորդում է մանչեսթերյան ակումբի մամուլի ծառայությունը:

Երկու ֆուտբոլիստներն էլ վնասվածքները ստացել են «Լուտոն Թաունի» դեմ Անգլիայի Պրեմիեր լիգայի նախորդ տուրի խաղում: «Մանչեսթեր Յունայթեդը» հաղթել էր 1:0 հաշվով:

20-ամյա հարձակվող Հոյլունը մկանային վնասվածք ունի եւ բաց կթողնի երեք շաբաթ:

31-ամյա կիսապաշտպան Էրիկսենը ծնկի վնասվածք է ստացել եւ չի խաղա մեկ ամիս:

Ավելի վաղ վնասվածքներ էին ստացել բրազիլացի կիսապաշտպան Կազեմիրոն եւ արգենտինացի պաշտպան Լիսանդրո Մարտինեսը: Նրանց վերադարձը «Մանչեսթեր Յունայթեդի» հիմնական կազմ սպասվում է հունվարին:

ՈՐՏԵ՞Ղ ՀԱՆԴԵՍ ԿԳԱ

Իտալիայի չեմպիոն «Նապոլիի» եւ Վրաստանի հավաքականի 22-ամյա կիսապաշտպան Խվիչա Կվարացխելիան ցանկանում է հանդես գալ Իսպանիայում. այդ մասին ասել է ֆուտբոլիստի գործակալ Նուկրի Ռեւիշվիլին:

«Իտալիայում «Յուվենտուսն» ու «Ռոման» եւս մոտ էին Կվարացխելիային ձեռք բերելուն: Նրա ծառայություններով հետաքրքրված էին նաեւ անգլիական եւ իսպանական ակումբներ, սակայն առավել հետաքրքրված էր «Նապոլին»:

Սովորաբար մեծ տաղանդները ծույլ են, բայց Խվիչան ունի խելահեղ աշխատասիրություն, ինչի շնորհիվ էլ ամեն ինչ ստացվեց: Նա ցանկանում է խաղալ շատ ավելի հզոր ակումբներում՝ «Ռեալում», «Բարսելոնայում»: Նա միշտ ունի աճելու մոտիվացիա»,- Ռեւիշվիլիի խոսքը մեջբերում է sport24.ru-ն:

Իտալիայի ընթացիկ առաջնությունում Կվարացխելին մասնակցել է 11 հանդիպման, խփել է 3 գոլ, կատարել 3 գոլային փոխանցում:

● *Նոյեմբերի 14-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Գնա՛ մեռի, արի՛ սիրեմ» ներկայացումը: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Գործում ինչպե՞ս կարող եմ ստանալ մարդատար եւ երթուղային տաքսիների ծառայություն իրականացնելու թույլտվություն:

Աշոտ Նավասարդյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համայնքի տարածքում մարդատար եւ երթուղային տաքսիների ծառայության թույլտվության համար անհրաժեշտ է դիմել քաղաքապետարան՝ Առեւտրի եւ սպասարկման բաժին:

ՀՀ Սյունիքի մարզպետարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համապատասխան թույլտվությունը տրամադրվում է 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է տրվում մահվան վկայականը:

Սիլվա Բոյաջյան (59 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մահվան վկայական ստանալու համար հարկավոր է դիմել ՀՀ ԱՆ ՔԿԱԳ (ԶԱԳՍ) տարածքային բաժին եւ ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝

1. մահվան վկայականը ստացողի անձնագիրը եւ պատճենը,
2. մահացածի անձնագիրը,
3. թաղամասային բժշկի կողմից տեղեկանք՝ մահվան մասին:

ՀՀ ԱՆ ՔԿԱԳ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՔԿԱԳ բաժնի աշխատակցի կողմից տրվում է դիմումի ձեւ, որը պետք է լրացվի վկայական ստացողի կողմից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից


РАСПРОДАЖА 11.11

Wildberries - - ձմեռային փառատոնի նվերներ

13 նոյեմբեր, 2023

Շնորհավորում եմ

Ձեր մրցանակն է՝ 100000 դրամ, հետևեք հաջորդ էջի հրահանգներին՝ ձեր մրցանակը ստանալու

Համացանցում Wildberries-ի անունից զեղծարարությունները նորից կրկնվում են: Օգտատերերը ստանում են անհայտ ծագման հղումներ, որին ըստ ցուցումների հետեւելուց հետո օգտատերերին խոստանում են դրամական պարգեւ: Դրամական պարգեւը ստանալու ձեւը նշելուց հետո արգելափակվում է հղումը: Սա անձնական տվյալներ շորթելու նոր եղանակ է, քանի որ Wildberries-ը նման նվերներ անելու դեպքում օգտատերերին կդիմեր ավելի պաշտոնական տարբերակով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+3 +5 / +10 +13
Կոտայքի լեռներ	+2 +4 / +9 +13
Կոտայքի նախալեռներ	+4 +6 / +13 +16
Գեղարքունիք	-2 +2 / +9 +13
Լոռի	-2 +3 / +12 +15
Տավուշ	+2 +7 / +13 +17
Արագածոտնի լեռներ	-2 +1 / +9 +11
Արագածոտնի նախալեռներ	+4 +7 / +14 +18
Արարատ	+3 +7 / +18 +20
Արմավիր	+2 +5 / +17 +19
Վայոց ձորի լեռներ	-1 +1 / +9 +13
Վայոց ձորի նախալեռներ	+3 +7 / +17 +20
Սյունիքի հովիտներ	+6 +10 / +10 +12
Սյունիքի նախալեռներ	0 +5 / +18 +22
ԼՂՀ	+9 +13 / +20 +24
Երեւան	+1 +3 / +15 +19

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*